ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ՅԱՂԹԱԿԱՆ

1921 ՓԵՏՐ. 18-Ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԴՎԶՈՒՄԸ ԱՊԱՑՈՒՑՆ Է
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՋԱՏ ԱՊՐԵԼՈՒ ԿԱՄՔԻ

1921-1980
59-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

ՓՈԹՈՐԻԿ

ՄԻ ՔԱՆԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մի հատուած Բ. Փափազեանի «Պատմութեան նենգափոխումը» գրքից, արեւելահայերէնի դարձուած.

Digitized by ARF PR Office

ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԸ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷԻՆ

«Դաշնակների փետրուարեան աւանտուրան *տեղական բնոյթի երեւոյթ չէր։ Այն խնամքով նախապատրաստուեց իմպերիալիստական պետութիւնների եւ Թիֆլիզում կենտրոնացած հակառեւոլուցիայի կողմից՝ Ադրբէյջանում եւ Հայաստանում Սովետական կարգերը տապալելու եւ Անդրկովկասից Սովետական Ռուսաստանի դէմ նոր արշաւանք կազմակերպելու նպատակով» (Ս. Խ. Կարապետեան, «1920 թւականի հայ-թուրքական պատերազմը եւ Սովետական Ռուսաստանը», էջ 52)։*

«Դաշնակները, ինչպէս նշուեց, հէնց թուրքերի օգնութեամբ կազմակերպեցին 1921 թւականի Փետրուարեան աւանտուրան...» (նոյն աղբիւրը, էջ 58)

«Դաշնակցութիւնն աշխատում է Փետրուարեան արկածախնդրութիւնն արդարացնել խորհրդային իշխանութեան տուած խոստումը դրժելով եւ «Կացին»-ի առասպելով» (Բէյրութի Հնչակեան օրգան «Արարատ», 5 մարտ 1968)։

«Խորհրդային Հայաստանի եւ նրա բարեկամ Խ. Ռուսաստանի դէմ ապստամբելու յաւակնութիւն վերագրել Դաշնակցութեան՝ իրապէս որ չափազանցութիւն պիտի լինէր։ Այս կազմակերպութիւնը, հակառակ իր արկածախնդիր ուղիին, չպիտի համարձակուէր հողմաղացների դէմ նոր դոնքիշոթութիւն փորձել։ Իրեն, ինչպէս անցեալում, նմանապէս այս առթիւ խորհրդաու եւ առաջնորդող հանդիսացան համաձայնականները, ինչպէս նաեւ, վերջին պահին, «զինակից» թուրքը» («Արարատ», 5 մարտ 1968, խմբագրական)։

Իրար նմանող, իրար կրկնող այս մէջբերումները,

կարեւորագոյն մասն են կազմում այն մեղադրանքների, որոնք Փետրարեան ապստամբութեան վերաբերեալ ուղղում են Դաշնակցութեան եւ որոնք կազմում են միտումնաւոր հիմնական նենգափոխումը:

Այդ բոլոր պնդումներն ուզում են ասել՝ 1.- Համայնավար վարչաձեւը ոչ մի խստութիւն եւ բռնութիւն չի գործադրել, ոչ մի կողոպուտ եւ գողութիւններ չեն կազմակերպուել եւ ոչ մի ժողովրդական դժգոհութիւններ նոր Խորհրդայնացած Հայաստանում չեն առաջացրել:

Այդ բոլորը Դաշնակցութեան կողմից ասուած պատրուակներ են՝ որպէսզի Դաշնակցութիւնը արդարացնի իր արկածախնդրութիւնը՝ Փետրարեան ապստամբութեան վերաբերեալ:

2.- Փետրարեան ապստամբութիւնը ժողովրդական ապսատամբութիւն չէր, այլ դրսից թելադրուած ու ասուած, Դաշնակցութեան կողմից կազմակերպուած մէկ ապստամբութիւն էր, նպատակ ունենալով իշխանութեան տիրանալ:

3.- Ասում են թէ Փետրարեան ապստամբութեան թելադրանքը եկել է՝ համայնավար Ռուսաստանի հակառակորդներից, այսինքն արեւմտեան պետութիւններից եւ Դաշնակցութեան «զինակից» Թուրքիայից:

4.- Դաշնակցութեան համագործակցութիւնը Թուրքիայի հետ աւելի պարզ եւ հասկանալի դարձնելու համար, «Արարատ»-ը ամենայն պաղարիւնութեամբ յայտարարում է թէ, Դաշնակցութիւնը «...Ջարդարար Թուրքին նախընտրում էր Խորհրդային Ռուսաստանից եւ պատրաստ էր սատանայի հետ զինակցել վերատիրանալու համար Երեւանի աթոռներին՝ հոգ չէ թէ թրքական սիններով». (խմբագրական «Արարատ»-ի, 4 մարտ 1968):

Այս բոլոր ասածները հինգ րոպէի քննութեան եւս չեն կարող դիմանալ, բայց որովհետեւ սովորութիւնն այդ ասուածքները քննութեան չառնելն է, այլ այդ անճիշտ յայտարարութիւնները, որպէս պատգամ կրկնելն է, որոնք ոչ միայն Դաշնակցութեան են վարկաբեկում այլ համայն հայ ժողովուրդը:

Քննենք, մէկ անգամ եւս:

Նախ մի քանի իրողութիւններ, որոնք վկայաբերուած են օր-օրին դէպքերն ապրած եւ մինչեւիսկ ապստամբութեան մասնակից Արմէն Սեւանի «Փետրար 18-ի Յեղափոխութիւնը» գրութիւնից, գրած 1921ին իսկ հրատարակուած՝ «Վէմ» երկամսեայ թերթի 1936 Յունար-Փետրար 13-րդ թուում, էջ 87-104:

1-Յեղկոմը Հայաստան մտաւ 1920 Դեկտեմբեր 6-ին եւ արժանացաւ բարեացակամ վերաբերումի:

2-Շուտով սակայն բոնութիւն ու հալածանք սկսեց երկրի մէկ կողմից միւսը: Համայնավար տղայամիտ գործիչներն ուզում էին Հայաստանի մէջ գործադրել իրենց այլոր տեսածները:

«Ազգային բոլոր արժէքները անարգեցին, իբրեւ բուրժուական ստեղծագործութիւններ»:

«... Հայ լեզուն անհետացաւ բոլոր պետական եւ հասարակական հիմնարկութիւններից»:

«Մամուլը դարձաւ բոլշեւիկեան մենաշնորհ, մտածելը համարուեց ոճիր»:

«Լրգրանի հետ կնքած համաձայնագիրը մոռացութեան տրուեց ամբողջութեամբ»:

«Ամենուրեք բռնագրաւումներ, պաշտօնական թալան. զէնքի սպառնալիքով խլեցին ժողովրդի ապրուստի վերջին հնարաւորութիւնները, «նէր»-ներ ուղարկելու համար Բագի եւ Մոսկայի բանտրութեան եւ կերակրելու համար Հայաստան բերուած ռուսական զօրքին: Ամենայայտնի չքաւորի տնից աշխատեցին խլել հացահատիկի եւ մթերքի ամենաչնչին քանակն իսկ, ձեռք բերուած ամենաչարքաշ աշխատանքի եւ զոհողութեան գնով»:

«Չտեսնուած, չլսուած բռնութիւն էր: Հայաստանի մերկ բնակչութիւնից խլեց հագուստեղէնի «աւելորդ» նըկատուած քանակը»:

«Ամենուրեք հայ գիւղացուց խլեցին իր գոյութեան պահպանման կենսական միջոցները. անասունները մորթեցին ռուս զօրքի համար. մի մասն ուղարկուեց Ռուսաստան: Յուցակագրուեցին ամենավերջին հաւն ու հաւկիթը»:

«Բոլոր մասնաւոր գրադարաններն ու գրքերը բռնագրաւեցին իբրեւ թէ պետական մատենադարանը ճոխացնելու. բայց փաստօրէն բաժանուեցին կոմունիստ ընկերների միջեւ»:

«Վրայ հասաւ Հայաստանի բանակի սպաների հաւաքական աքսորը, ամենատմարդի ձեւով եւ ամենատաժանելի պայմանների մէջ (1921 Յունուար 24): Այս դէպքից յետոյ ժողովրդական դժգոհութիւնը փոխուեց համատարած զայրոյթի եւ ատելութեան: Ամեն կողմից, քաղաքներից թէ գիւղերից հասնող տեղեկութիւնները ցոյց էին տալիս, թէ արդար զայրոյթի պայթումը անխուսափելի է»:

«Բռնութիւնները շարունակուեցին եւ հասան իրենց խստութեան գագաթնակէտին. սպաները աքսորուել էին, իբ-

րեւ «վտանգաւոր» տարր, մնում էր մտաւորականութիւնը, պէտք էր նրան էլ չէզոքացնել ժողովրդից, առնւազն աքսորելով, որոշ տարրեր բնաջնջելով։ Այդ նպատակով, Փետրուար 9-ի գիշերը կատարուեցին ընդհանուր ձերբակալութիւններ. մէկ գիշերւայ մէջ բանտ նստեցին մեր բոլոր ականաւոր դէմքերը»։

«Սկսել էին տարածուել տխուր շշուկներ բանտարկեալների ճակատագրի մասին. որոշ մարդկանց գնդակահարած լինելը համարւում էր կասկածից դուրս։ Այդ բոլորի մասին այլեւս կասկած չմնաց, երբ Երեւանի պատերին կպրցին 21 գնդակահարածների ցուցակը։ Այդ պատկերի առջեւ ժողովրդի ցասումը հասաւ իր լրումին. ամեն ընտանիք բանտում մէկին ունէր, որի ճրագը րոպէից րոպէ կարող էր մարել։ Գաւառը պարզեց ապստամբութեան դրօշը, Փետրուար 16-ի առաւօտից մինչեւ 17-ի իրիկունը ամբողջ գաւառը ազատագրած էր»։

Եթէ այս վկայութիւնները առարկութեան ենթարկւեն եւ այդ բոլորը կողմնակալ վկայութիւններ համարւեն, քանի որ նրանց հեղինակը ժամանակակից եւ մասնակից էր Փետրուարեան ապստամբութեան եւ դաշնակցական, այդ պարագայում վկայութիւններ տանք համայնավար պատմագիրների կողմից գրած։

Բորեանը, իր «Արմենիա» գործի մէջ, տպագրած Մոսկւայում, գրում է հետեւեալը (հատոր Բ., էջ 126). «Անկանոն գրաւումները, բռնագրաւումը գրեթէ ամեն բանի, եւ զինուորական զգեստի, եւ տնայնագործական մասնաւոր եւ այլ կարգի սանդկոթերի, եւ ամեն կարգի ջրաղացների, վարսավիրային գործիքների, գիւղացիական փեթակների, ճերմակեղէնի, հագուստի, տնային կահ կարասիների (առանց քաղաքացիների դասակարգային ծագումը նկատի առնելու) եւ այլն, - այս ամենը, հասկանալի է ինքնին, երբեք դասակարգային բնոյթով միջոցառումներ չէին, այլ ընդհակառակն, դրանք արտայայտութիւնն էին այն բանի, որ իշխանաւորները չեն հասկացել ու չեն ըմբռնել ինչպէս խորհրդային քաղաքականութեան բնոյթը, այնպէս նաեւ համայնավար ու դասակարգային գաղափարաբանութիւնը։ Եւ բնական է որ այս միջոցառումները, որոնք գործադրւում էին ճնշումներով, հիմնական պատճառն էին Փետրուարեան ապստամբութեան՝ երկրի մէջ»։

Համայնավար Բորեանի գրքից կատարած այս մէջբերումն առել ենք Վ. Նաւասարդեանի «Բոլշեւիզմը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը» գրքից, էջ 554-555։ Նոյն մէջբերումի

թարգմանութիւնը կարելի է գտնել նաեւ Գ. Լազեանի «Հայաստանը եւ Հայ Դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ» հատորի 265-րդ էջի մէջ։ Այս վկայութեան ընդգծելի բառերը հետեւեալներն են՝ «Այս միջոցառումները հիմնական պատճառն էին Փետրարեան ապստամբութեան»։

Ո՛չ արտաքին քաղաքականութեան սատրանքները, ո՛չ Թուրքի մատը, ո՛չ Դաշնակցութեան արկածախնդրութիւնը, ո՛չ իշխանատենչութիւնը, ո՛չ փառամոլութիւնը, ո՛չ էլ օտարազգի օժանդակութիւններով «Երեւանի Աթոռներին» տիրանալու երազանքը. այլ պարզ ու միայն՝ նոր հաստատած համայնավարական վարչաձեւի աներեւակայելի բռնութիւններն ու հակաժողովրդական միջոցառումները։

Եթէ Բորեանի վկայութիւնները հին համարուեն, թէեւ անշուշտ թեականով շատ աւելի մօտ են դէպքերին, քան թէ այսօրուայ գրուածները, կարելի է եւ պէտք է դիմել նոր հրատարակութիւնների եւս, հէնց համայնավարական պատմագրութեան մէջ յայտնուած խոստովանութիւններին, որպէսզի փաստեն թէ Փետրարեան ընդվզումը մէկ ժողովրդական ապստամբութիւն էր, արդիւնք անպատմելի բռնութիւնների, որոնք գործեց ժողովրդի դէմ։ Երեւանի մէջ նոր լոյս տեսաւ, 1967-ին «Հայ ժողովրդի պատմութիւն» վերնագրով, մեծահատոր մի գիրք, հրատարակութիւն հայկական Ս. Ս. Հ. գիտութիւնների Ակադեմիայի Պատմութեան ինստիտուտի։ Խմբագրութեամբ մէկ խմբագրական մարմնի, որի գլխաւոր խմբագիրն է Յովհաննիսեան Ա. Գ.։ Լոյս տեսած այս հատորի 7-րդ թիւը թէեւ առաջինն է որ լոյս է տեսնում հրատարակելիք հատորներից պարունակում է հայոց պատմութեան վերջին շրջանը, 1917-ից 1945։ Սոյն հատորի հինգերորդ գլխի տակ «Քաղաքացիական կռիւները Հայաստանում 1921-ին» վերնագրով, «Դաշնակցականների հակայեղափոխական խռովութիւնը» ենթավերնագրի տակ, էջ 137, հետեւեալ պարբերութիւնը կայ.-

«Փետրարեան աւանտուրայի նախօրեակին Հայաստանում իրադրութիւնը որոշ չափով բարդացել էր նաեւ այն պատճառով, որ ռազմական կոմունիզմի քաղաքականութեան կիրառման ընթացքում, անհրաժեշտ չափով հաշի չառնելով հանրապետութեան առանձնայատկութիւնները, տեղերում թոյլ էին տրուել մի շարք շեղումներ, սխալներ, որոնք օգտագործեցին դաշնակցականների կողմից։ Այդ արտայայտուեց նրանով, որ խախտելով ռազմական կոմունիզմի սկզբունքները, շատ դէպքերում տեղական աշխատողները վերցնում էին ոչ միայն աշխատաւոր գիւղացիութեան

պարենային աւելցուկը, այլեւ ամբողջ պաշարը, որը դժգոհութիւն էր առաջ բերում։ 1921 Յունուարին նախկին բանակի սպաների արտաքսումը հանրապետութեան սահմաններից նոյնպէս դժգոհութիւնների առիթ տուեց»։ Սրանից աւելի պարզ ու շեշտած կերպով դժար թէ հաստատի այն ինչ որ տասնամեակներ շարունակ կրկնել է Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ եթէ Հայաստանի նոր վարիչները (համայնավար վարիչները) ժողովրդի հանդէպ բաւարար գուրգուրանք եւ խոհեմութիւն ցոյց տային իրենցից, ոչ մի ձեւի խռովութիւն եւ ապստամբութիւն տեղի չէր ունենայ։ Ժողովրդի անունով խօսողները պարտաւոր են նաեւ գործել ժողովրդի համար. այդ պարագային միայն ժողովրդականութիւն կունենան եւ ժողովուրդը չի ապստամբի։

Փետրարեան ապստամբութեան ժողովրդական բընոյթի մասին իր ժամանակաշրջանում վկայել է արեւելահայ բանաստեղծ՝ Յովհաննէս Թումանեանը, Ս. Օրջոնիկիձէին ուղարկած իր երկար հեռագրի մէջ, Երեւանից Թիֆլիզ տըրուած, 1921 Մարտ 24-ին, որտեղ պարզ ձեւով ասում էր, թէ՝ «Շարժումը սկսել է գիւղացիութեան մէջ, զանազան շրջաններում տարածւել-հասել է Երեւան եւ գրաւել է մտաւորականութիւնը» (տեսնել Ս. Վրացեանի «Հայաստանի Հանրապետութիւն» հատորը կամ «Հայաստան բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ» գիրքը, էջ 165)։

Այնքան բացայայտ կերպով անվարչագէտ վերաբերմունքի արդիւնք էին ժողովրդական դժգոհութիւնները եւ ապստամբութիւնը, որը հետագային, Լենինը ինքը իր ընկերներին սաստեց իրենց ծայրայեղութեան համար, երբ Երեւան ուղարկեց Ալ. Միասնիկեանին, մի նամակով, որտեղ ի միջի այլոց, գրում էր.-

«Աւելի մեղմութիւն, զգուշութիւն, զիջողութիւն դէպի մանր բուրժուազիան, մտաւորականութիւնն ու յատկապէս գիւղացիութիւնը»։

Կամ, մի քիչ այնկողմ. «Աւելի դանդաղ, աւելի զգուշաւոր, աւելի սիստեմատիկ փոխանցում դէպի ընկերվարութիւնը, ահա թէ ինչ է հնարաւոր եւ անհրաժեշտ»։

Նամակը իր ամբողջութեան մէջ մի մեղադրանք է ուղղած օրւայ համայնավար ղեկավարութեան, իր գործելակերպի համար, որը ժողովրդային ընդվզումի պատճառ էր դարձել (տեսնել Գ. Լազեանի «Հայաստան եւ Հայ Դատը» գրքի 279-281-րդ էջերը, Լենինի նամակի ամբողջական թարգմանութիւնը)։

Ապստամբութեան ալիքը այնքան ժողովրդական հիմ-

քեր ունէր, որ սրբեց, տարաւ զէնքի ուժին յենուած իշխանատորներին, որոնք ետ կարողացան վերադառնալ դարձեալ յաւելեալ զէնքի ուժով եւ ռուսական բանակներով միայն։

Ոչ մի կասկած, որ պատմականօրէն, նախընտրելի էր որ արիւնաքամ Հայաստանն ու հայ ժողովուրդը Փետրուարեան ապստամբութեան ցնցումներին չենթարկուէին։ Բայց պէտք է ճշտել պատասխանատուութիւնները, պէտք է արձանագրել երկիրն ու ժողովուրդը ամեն գնով այդ դժբախտ կացութեան առաջնորդողների անունները, եւ այդ անունները Հ. Յ. Դաշնակցութեան շարքերում չեն, Լենինի կամ Բորեանի կողմից մեղադրանքները նրանց վրայ ուղղուած չեն, երկուսն էլ Ոչ Դաշնակցական վկաներ են։ Մեղադրանքները ուղղուած են նրանց, որոնք համայնացում, պետականացում, համայնավարութիւն փորձեցին խաղալ մէկ թոյլ երկրի մէջ, յոգնաբեկ ու աղքատ մէկ ժողովրդի գլխին, ամեն գնով նրան մղելու համար ապստամբութեան, որպէսզի արեան մէջ խեղդելով ապստամբութեան փորձը՝ սարսափի մթնոլորտ ստեղծեն՝ եւ այդ սարսափի վրայ կարողանան երկրի մէջ մի մնայուն իշխանութիւն հաստատել, հակառակ իրենց անժողովրդականութեան։ Այդ սարսափի քաղաքականութիւնը հետագային Ստալիններն եւ Բերիաներին առաջնորդեցին արւեստի բարձրութեան. սակայն առաջին փորձերը Հայաստանում հա՛յ մարդիկ կատարեցին։

Դժբախտաբար իրենց համար, եւ ի պատիւ հայ ժողովրդի, սարսափները ոչ թէ թուլացրին հայ ժողովրդին, այլ նրան առաջնորդեցին ամեն գնով ազատուել նման լծից, Փետրուարեան յաղթական ապստամբութեան միջոցով։ Ճիշտ է, երկար չդիմացաւ նորից անկախութեան հասած Հայաստանը, քանի որ ոչ ոք միջազգայնօրէն այդ օրերին տրամադիր չէր նրա անկախութեան իրաւունքը պաշտպանել զինուորական կամ բարոյական ճնշումներով. բոլորը զբաղուած էին իրենց գործով, սեփական շահերի ապահովման համար, սրբան ու նրան սիրաշահելու աշխատանքով, եւ այդպիսով Հայաստանը լքուած էր իր ճակատագրին, եւ շուտով տեղի տուեց ռուսական բանակների դիմաց. Սակայն գոնէ ունեցաւ հիմնական երկու արդիւնք,- մինչեւ այդ գործադրուած համայնավար ղեկավարութեան դաժան վերաբերմունքի մեղմացումը եւ հայ ժողովրդի գիտակցութեան մէջ սեփական, ազատ ու անկախ պետութեան պահանջի ամրապնդումը, որպէս միակ ճանապարհ լրիւ գոյութեան եւ ազատ կեանքի։

Այս բոլորի պարզաբանութիւնից յետոյ ո՞ւր է մնում Դաշնակցութեան «Թրքական օրիենտացիան», «Թրքասիրու-

թիւնը», «Թրքական զինակցութեամբ Փետրարեան ապըստամբութեան արկածախնդրութեան մէջ նետած լինելու» առասպելը...:

Այդ շրջանի պետական բոլոր թղթածրարները իր տըրամադրութեան տակ ունեցող պետութիւնը ինչպէ՞ս է որ դաշնակ-թուրք գործակցութեան եւ Փետրարեան ապստամբութեան համար նախածրագած ոչ մի փաստ չի կարող հրապարակել, եւ գոհանում է 1920 Նոյեմբեր 20-ի Երեւանի «Յառաջ» թերթի գրած խմբագրականի մի քանի տողերին, այդ ներկայացնելով որպէս փաստ Դաշնակցութեան «Թրքական օրիենտացիա»-յի: Արդեօք մէկ հատ պաշտօնական գրութիւն կամ գաղտնի բանակցութիւններ բացայայտող փաստաթուղթ գոյութիւն ունի՞: Ո՛չ, չկա՛յ:

Յիշատակում է այն իրողութիւնը, թէ՝ Հայաստանի Փրկութեան Կոմիտէն, Փետրարեան ապստամբութիւնից յետոյ իշխանութեան գլուխ գալով, դիմել է Թրքական կառավարութեան եւ խնդրել՝ որ գերի տարած հայ Սպաները Հայաստան վերադարձուեն: Արդեօք Հայաստանի կառավարութիւնը պէտք է անտարբե՞ր գտնուէր գերի ընկած իր ըսպաների ճակատագրի հանդէպ, չպէ՞տք է փորձեր նրանց ազատման եւ տուն վերադարձման ուղղութեամբ: Թէ ոչ, պէտք է վարուէր այնպէս, ինչպէս վարուեց Յեղկոմի կառավարութիւնը.- պէտք է աքսորէր հայ սպաներին եւ կամ թողնէր Թրքական բանտերում փտեն...:

Յիշատակում է այն իրողութիւնը, թէ՝ Թուրքիայի ներկայացուցիչը Երեւանում, Բահաէդդինը՝ կապ էր պահում Փրկութեան Կոմիտէի կառավարութեան եւ Թրքական հրամանատարութեան միջեւ (ապստամբութիւնը յաջողուելուց յետոյ): Ինչո՞ւ է յիշատակում այս իրողութիւնը: Ալեքսանդրապոլի դաշնագիրը կնքած, պարտած Հայաստանի կառավարութիւնը արդեօք կարո՞ղ էր կապերը խզել Թուրքիայի հետ... այն էլ Փետրարեան ապստամբութիւնից, ամբողջովին տկարացած Հայաստանի՝ անորոշ դրութեան մէջ գտնուող մէկ կառավարութիւն...:

Առպակաս երեխաայամտութիւն պիտի լինէր նման մի քայլի սպասելը որէ հոսանքի պատկանող կառավարութիւնից:

Փետրարեան ապստամբութիւնը ներկայացում է նաեւ որպէս պատրուակ Սովետական Ռուսաստանի կառավարութեան կողմից Կարսն ու Արտահանը ազատագրել չկարողանալու համար Ս. Խ. Կարապետեանի, գրքոյկի մէջ «1920 թւականի Հայ-Թրքական պատերազմը եւ Սովետական Ռու-

սաստանը, էջ 58 գրած է «Բացի այդ, հայ ժողովրդի առջեւ Դաշնակների մեծագոյն յանցագործութիւնն այն էր, որ երբ Սովետական Հայաստանի եւ Սովետական Ռուսաստանի կառավարութիւնները վճռական կերպով յայտարարեցին, թէ չեն ընդունում 1920 թականի Դեկտեմբեր 2-ին Ալեքսանդրապոում կնքած դաշնագիրը եւ պահանջում են անմիջապէս բանակցութիւններ սկսել թուրքերի կողմից զաւթած հայկական շրջանները (Կարսի մարզ, Ալեքսանդրապոլ եւ այլն) ազատելու համար, այդ ժամանակ դաշնակները, ինչպէս նշուեց, հէնց թուրքերի օգնութեամբ կազմակերպեցին Փետրարեան աւանտուրան, որի հետեւանքով Հայաստանի Սովետական կառավարութիւնը ստիպած եղաւ թողնել Երեւանը, որով եւ ընդհատուեց Սովետական Հայաստանի կառավարութեան պայքարը թուրքերի կողմից զաւթած հայկական տերիտորիան ազատագրելու համար»:

Սրանք յայտարարութիւններ են, որոնց կարող է հաւատալ միամիտ ընթերցողը, եթէ լաւապէս ուսումնասիրած չլինի այդ թականների հայոց պատմութիւնը, ռուս-թրքական յարաբերութիւնների ընթացքը, Ալեքսանդրապոլի 1920 Դեկտեմբեր 2-ի, Մոսկայի 1921 Մարտ 16-ի եւ Կարսի 1921 Հոկտեմբեր 13-ի դաշնագրերը: Յայտարարութիւններով ու վերագրումներով պատմութիւն չի կարելի գրել, միայն շփոթ ու կասկած կը ցանի:

Հայ երիտասարդը իր մօտիկ անցեալի կենսական եւ կարեւոր դէպքերի վերաբերեալ պարտաւոր է ունենալ պարզ, յատուկ եւ հիմնաւորած տեսակէտներ: Պէտք է քննի կատարուած յայտարարութիւնները:

Քննենք.

1.- Խորհրդայնացած Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ա. Բէկզադեանը, 21 Յունար 1921-ին, Անգարայի կառավարութեան ուղղած մէկ յուշագրով, պատճէնը Մոսկա, արտաքին գործերի կոմիսար Չիչերինին բողոքում էր թրքական ներկայութեան եւ խառնակցութեան դէմ Ալեքսադրապոլում եւ Կարսում. եւ Բէկզադեանը դրա դարմանը գտնում էր Ալեքսանդրապոլի եւ Կարսի հիւսիսային եւ արեւելեան շրջանների դատարկման գործում: Այս յուշագիր – հեռագիրը մնաց անպատասխան թէ՛ թուրքերի եւ թէ Մոսկայի կողմից:

2.- Փետրարեան ապստամբութիւնից քիչ յետոյ, թէ Մոսկան եւ թէ Թուրքիան իմանալով այն որ Հայաստանը բացարձակապէս անօգնական է մնացել, չի կարող երկար դիմանալ եւ ռուսական զօրքի ուժով նորից պիտի ճնշի ու

գրաւի, Մոսկայի մէջ բանակցութիւններ սկսեցին, իրենց միջեւ գոյութիւն ունեցող մնացած հարցերը լուծելու համար: Բանակցութիւնները վերջացաւ 1921 Մարտ 16-ին Մոսկայի դաշնագրի ստորագրութեամբ:

3.- Այդ բանակցութիւնների ընթացքում Մոսկայում էին Կասեանի Յեղկոմի ներկայացուցչութիւնը, Ալ. Բէկզադեանը եւ Սահակ Տէր Գաբրիէլեանը: Խորհրդային Ռուսաստանի համար Երեւանի մէջ տեղի ունեցածը միայն մէկ «ապըստամբութիւնը» էր եւ Հայաստանի «օրինաւոր» կառավարութիւնը Յեղկոմի կառավարութիւնն էր. մանաւանդ որ այդ կառավարութիւնը Հայաստանից դուրս չէր եկել եւ գտնւում էր Դաւալուի շրջանում, զրահապատ շոգեկառքի մէջ:

4.- Հակառակ այս իրողութեան, Թուրքիայի պնդումի վրայ, Սովետական Հայաստանի պատփրակութիւնը (ինչպէս նաեւ Կովկասեան միւս ազգերի անունով գործող պատփրակութիւններ) այդ համաժողովի աշխատանքներին չմասնակցեցին (այս մասին տեսնել Ա. Եսայեանի սրանից առաջ յիշատակւած գիրքը էջ 342): Թիւրքերի առարկութիւնը այն էր, որ իրենք լիազօրւած չեն Հայաստանի հետ բանակցելու, էջ 343) որով, ըստ Եսայեանի «Հայաստանի, ինչպէս նաեւ Անդրկովկասի միւս հանրապետութիւնների շահերի պաշտպանութիւնը ռուսաստանեան պատփրակութիւնը վերցրեց իր վրայ»: Աւելի պարզ բառերով նշանակում է, թէ՝ Սովետական Ռուսաստանն ու Թուրքիան իրար հետ համաձայնութեան եկան եւ Սովետական Ռուսաստանը վճռեց Հայաստանի եւ նրա սահմանների ճակատագիրը (Արդեօք Մոսկայում գտնւող Խորհրդային Հայաստանի պատփրակութեան կարծիքը հարցւե՞ց. չգիտենք, սակայն Մոսկայի դաշնագրի արդիւնքից դատելով, պէտք է եզրակացնենք թէ՝ Չի առնւել հայոց կարծիքը *կամ էլ նկատի չի առնւել):*

5.- Մոսկայի Մարտ 16-ի դաշնագիրը աւելի ցաւալի ու ամօթալի է, քան Ալեքսանդրապոլի դաշնագիրը:

Ալեքսանդրապոլի դաշնագրով, Կարսի նահանգն ու Սուրմալուն մինչեւ երեք տարի վիճելի *էին համարւել, որի ընթացքում Հայաստանի կառավարութիւնը կարող էր հանրաքւէ հաւաքել, այդ նահանգների վերջնական վիճակը պարզելու համար:*

Մոսկայի 1921 Մարտ 16-ի դաշնագրով այդ տրամադրութիւնը ոչնչացւել էր եւ այդ նահանգները վերջնականապէս յանձնւում էին Թուրքիային:

Ալեքսանդրապոլի դաշնագրի ստորագրողը յաղթած

Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնն էր, որ այդ ձեւով Հայաստանը ազատում էր թրքական յարձակումից եւ ապագայ Խորհրդային կառավարութեան այն կարելիութիւնն էր տալիս որ Ալեքսանդրապոլի դաշնագիրը չընճանաչի, որպէս այլեւս իշխանութիւնից ընկած կառավարութեան կողմից ստորագրած մի դաշնագիր:

Կարսի դաշնագիրը ստորագրող Խորհրդային Ռուսաստանը, որ հայկական հողերը առատաձեռնօրէն եւ վերջնական ձեւով նւիրում էր Թուրքիային, ի՞նչ պարտութիւն էր կրել որ այդպէս մի դաշնագիր էր կնքում:

Ալեքսանդրապոլի դաշնագրով, երեք տարի վիճելի եւ անորոշ վիճակի թողնւած Կարսն ու Սուրմալուն, առանց ոչ մի պատճառի ու փոխարինութեան նւիրելով Թուրքիային ինչ եւ ո՞ւմ քաղաքական շահերն էր պաշտպանում Մոսկւան. հայ ժողովրդի՞, Հայաստանի՞... Հայաստանին օգնութիւն հասցնելու համա՞ր էր որ այդ հողերը նւիրում էր Թուրքիային: Փետրւարեան ապստամբութիւնը ի՞նչ կապ ունէր այդ հողերը Թուրքիային զիջելու հետ: Ընդհակառակն, հայ ժողովրդին բարեկամ ներկայանալու համար ամենից լաւ առիթը էր, այդ օրերին Թուրքիայից զիջումներ ձեռք բերելը ի նպաստ Հայաստանին, մի բան որ պիտի աւելացներ ռուսական եւ համայնավարական վարկը Հայաստանի եւ հայ ժողովրդի մօտ:

Աւելին,

Ալեքսանդրապոլի դաշնագրով Նախիջեւանի ու Շարուրի շրջանները թրքական հովանաւորութեան տակ ժամանակաւորապէս ինքնավարութիւն ստացան մինչեւ իրենց վիճակի պարզւելը: Անկասկած ծանր էին այս պայմանները. բայց աւելի քիչ քան Մոսկւայի դաշնագրի պայմանները: Մոսկւայի դաշնագրով Շարուրն ու Նախիջեւանը յանձնւում էին Ադրբէյջանին եւ վերջինս իրաւունք չունէր դրանք փոխանցելու մի երրորդ կողմի (այսինքն Հայաստանին):

Ի՞նչ կապ կայ Փետրւարեան ապստամբութեան եւ Մոսկւայի այս զիջումների միջեւ, այդ ի՞նչն էր որ Մոսկւային արգիլում էր ասելու թէ՝ «ինքը իրաւունք չունի առանց Հայաստանի եւ հայ ժողովրդի մասնակցութեան ու համաձայնութեան, նման հողային զիջումներ կատարելու. քանի որ Լենինը յայտարարել էր ազգերի ինքնորոշման իրաւունքը»:

Ո՛չ. Փետրւարեան ապստամբութիւնը չէր, որ Հայաստանի հողերի ճակատագրին խիստ հարւածեց եւ անջատեց այն ի շահ Թուրքիայի. այլ Մոսկւայի ղեկավարու-

թեան որոշումն էր, Սովետական Ռուսաստանի «շահերի պաշտպանութեան», դժբախտաբար սխալ մէկնակէտով։

Նոյն սխալը շարունակուեց նաեւ հետագային։

6.- Հետագային, երբ Թուրքի հարց չկար, այլ միայն ներքին հարց գոյութիւն ունէր, Սթալինեան սահմանադրութեամբ Ախալքալաքն ու հայկական Լոռիի մէկ մասը յանձնուեցին Վրաստանին եւ Ղարաբաղը՝ Ադրբէյջանին։ Արդեօք դարձեալ Դաշնակցութեան Փետրարեան արկածախնդրութեա՞ն հետեւանքն էր այս բոլորը։

7.- Ռուսաստանի ու Թուրքիայի միջեւ ստորագրած Մոսկայի դաշնագիրը՝ որը կատարուել էր փաստօրէն առանց հայերի, նորից գրուեց եւ ստորագրուեց 1921 Հոկտեմբեր 13-ին, այս անգամ մասնակցութեամբ կովկասեան ազգերի եւ խորհրդայնացած հանրապետութիւնների ներկայացուցիչների՝ Կարսի մէջ։ Հայերը երկու չնչին խնդրանք էին կատարել, Անին եւ նաեւ Կովկասի համար կենսական արժէք ունեցող Կողբի աղահանքերը թողնել Հայաստանին կամ գոնէ տալ օգտագործման մենաշնորհը։ Երկու առաջարկներն էլ Թուրքիայի կողմից մերժուեցին եւ Խորհրդային Ռուսաստանի պատիրակութիւնը ոչ մի պնդում, ոչ մի կըտրուկ ու վճռական պահանջ, ոչ մի սպանուալիք չկատարեց։ Արդեօք դարձեա՞լ Փետրարեան ապստամբութեան պատճառով...

Ոչ։

Համայնավար պատմագիր Բորեանը պարզօրէն բացատրել է Հայաստանի հաշին տեղի ունեցող հողային այդ զիջումների պատճառները, երբ գրել է «Արմենիա» գրքի մէջ՝ «Հայաստանը Սովետականացնելուց յետոյ մաքսիմալ տերիտորեալ զիջումներ կատարուեցին Թուրքին ի հաշիւ Հայաստանի... ինքնին հասկանալի է, որ սովետական դիւանագիտութիւնը հաշի էր առնում Թուրքիայի քաղաքական նշանակութիւնը Արեւելքում՝ ընդդէմ արեւմտեան իմպերիալիզմի, այլ ոչ թէ Թուրքերի ըէալ ուժը, որոնք զաւթել էին Հայաստանի տերիտորիայի մի մասը՝ դաշնակցական կառավարութեան օրօք։ Դիւանագիտութեան առաջ խնդիր էր ծառացած՝ իմպերիալիզմի դէմ միջազգային յեղափոխութեան շահերի համար վաւերացնել Թուրքերի զաւթումը»։ (Բորեան, «Արմենիա», հատոր երկրորդ էջ 285)։

Այս բոլորը տեղի ունեցան Փետրարեան ապստամբութիւնից յետոյ. սակայն միայն թւականի կարգով յետոյ են, եւ ոչ թէ պատճառական կարգով. սրա ապացոյցն է Սթալինի

12 Փետրար, 1921-ին, Լենին ուղարկած հեռագիրը.

«ընկեր Լենին,

Ես երէկ իմացայ, որ ընկ. Չիչերինը Թուրքերին ուղարկել է ինչ որ մի յիմար ու պրովակացիոն պահանջ Վանի, Մուշի եւ Բիթլիսի մաքրման մասին – թրքական գաւառներ, Թուրքերի հսկայական գերակշռութեամբ – յօգուտ Հայաստանի: Այդ հայկական իմպերիալիստական պահանջը չի կարող լինել մեր պահանջը: Պէտք է արգիլել Չիչերինին Թուրքիային նոթայի առաքումը՝ հայերի նացիոնալիստական յամառ թելադրանքի տակ:

ՍԹԱԼԻՆ»

Հայ ժողովրդին «իմպերիալիզմ» վերագրած ժամանակ, Հայաստանի խորհրդայնացած էր եւ դեռ Փետրարեան ապստամբութիւնը տեղի չէր ունեցել: Ոչ միայն այդ, այլ Հայաստանի հողերի մէկ մասը թրքական գրաման տակ էր մնում եւ Ալեքսանդրապոլի համայնավար Յեղկոմը դիմում էր (1921 Յունարին) Հայաստանի Յեղկոմին, Սովետական Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդին, Կոմինտերնի գործադիր խորհուրդին, բողոքելու համար Թուրքիայի գրաման անմարդկային մեթոդների դէմ՝ աքսոր, կողոպուտ եւ կոտորած: Այդ հեռագիրը յղող Սթալինը անծանօթ չէր հազիւ վեց տարի առաջ տեղի ունեցած ցեղասպանութեան փորձին, որի հետեւանքով էր միայն, որ Վանի ու Բիթլիսի նահանգները կամ Հայաստանի որեւէ նահանգ դարձել էր «թրքական գաւառներ, Թուրքերի հսկայական գերակշռութեամբ»:

Այս բոլորն իմանալով հանդերձ, Փետրարեան յեղափոխութիւնից առաջ, *Սթալինը պահանջում էր Թուրքերին զիջումներ անել ի վնաս հայ ժողովրդի եւ Հայաստանի. եւ իսկապէս Չիչերինի նոթաները շուտով չէզոքացուեցին եւ այդ բոլորին փոխարինեց Մոսկայի 1921 Մարտ 16-ի դաշնագիրը, որտեղ Թուրքիան լրիւօրէն գոհացում ստացաւ եւ հայ ժողովուրդը ու Հայաստանը զոհուեցին սովետական Ռուսաստանի միջազգային շահերի ապահովման համար:*

Դժբախտաբար Սովետական Ռուսաստանն առաջնորդում էր պատմութեան, աշխարհագրութեան եւ ժողովուրդների նկարագրի սխալ արժէքաւորումով, սեփական շահերի ոչ առողջ, անկայուն եւ վերջին հաշուով՝ աննպաստ ուղղութեամբ, եւ մինչեւ այսօր շարունակում է առաջնորդել

Թուրքիային ի նպաստ քաղաքականութեան ճամբով. փոխանակ առաջնորդի ճիշտ հակառակ մտածողութեամբ, - որը միակ իրական լուծումը պիտի բերի Հայկական բարձրավանդակի շուրջ եւ դրա համար տեղի ունեցող պայքարներին եւ պատերազմներին. – այսինքն այդ լեռնաշխարհը ամբողջական ձեւով վերադարձնել այն ազգին, որը դրա միակ իրաւատէրը լինելուց բացի, միակն է որ կարող է այդ վերածել կենսունակ, բոլորին օգտակար ու բարեկամ, ծաղկած մի երկրի, որ փոխանակ տեւական գլխացաւանք, խընդրարկու կամ կռահնձոր լինելու, դառնայ կամուրջ բարեկամութիւնների եւ քաղաքակրթութիւնների։